«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ

ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ա. Առաքելյան 10

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության Տնօրենների Խորհրդի կողմից ընդունված որոշում

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2011թ-ի ապրիլի 21-ին կայացած Տնօրենների Խորհրդ նիստում որոշում է կայացվել գումարել ընկերության բաժնետերերի ընդհանու տարեկան ժողով:

Ստորև ներկայացվում է Տնօրենների Խորհրդի ընդունած որոշումը:

Վ. Բեգլարյան — Գլխավոր տնօրեն, Տնօրենների Խորհրդի անդամ

(ստորագրություն)

28.04.2011թ.

«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

«25» ապրիլի 2011 թ. N 3-2011/01

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Լեռնայի Ղարաբաղի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բա բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.4 կետը և «Արցախ ՀԷԿ» բա բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 21.04.2011թ. նիստի 3-201 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրեններ խորհուրդը որոշում է՝

1. 2011թ. մայիսի 30-ին, ժամը 11:00-ին, Լեռնային Ղարաբաղ Հանրապետություն, ք. Ստեփանակերտ, Թումանյան 63. հասցեու գումարել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությա բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:
2. Բաժնետերերի գրանցման ամսաթիվ և ժամ սահմանել 2011թ. մայիսի 30-ի ժամը 10:00, իսկ վայր՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք Ստեփանակերտ, Թումանյան 63:

3. Բաժնետերերի տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմել 2011թ. ապրիլի 21-ի դրությամբ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:
4. Հաստատել «ԱՐՑԱԽ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր ժողովի օրակարգը՝ ընդգրկելով հետևյալ հարցերը.

1) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի տնօրենների խորհրդի ընտրություն,

2) Տարեկան հաշվետվությունների ներկայացում,

3) Տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատում,

4) 2010թ. ընկերության ֆինանսական գործունեության վերաբերյալ Աուդիտորի եզրակացության ներկայացում,

5) Ընկերության 2011թ. ֆինանսական գործունեության աուդիտորական կազմակերպության ընտրություն,

6) Տարեկան հաշվետվություններում արտացոլված տվյալների արժանահավատության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եզրակացությունը,

7) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի 2010 թվականի գործունեության արդյունքներով տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունում և տարեկան շահութաբաժինների չափի հաստատում,

8) «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ի կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին (իրավաբանական հասցեի փոփոխություն):

5. Բաժնետերերի տարեկան ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցել էլեկտրոնային փոստի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ ծանուցումը տրամադրել առձեռն կամ փոստով:
6. Հաստատել քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը՝ համաձայն հավելվածի:
7. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը լրացված քվեաթերթիկները կարող են ուղարկել (ներկայացնել) ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Վ. Սարգսյան 25ա հասցեով՝ մինչև 2011 թվականի մայիսի 30-ը, ժամը 16:00-ն:
8. Հանձնարարել Ընկերության գլխավոր տնօրենին ապահովել սույն որոշմամբ նախատեսված աշխատաքների իրականացումը:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի ապրիլի 21-ից:»